



ԱՐԾՈՒՄ
Վ ԱՍԳՈՒԲԱԿԱՆ

ԹՈՒՈՒՅՆԱՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵՒՕԳ
ՅԱՐԺ ԲՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԵՆ ՎԱՐԱԳԱՅ

ԽՄԻԱԳԻՐ ՀԱՅՐԵՆԱՅԻՕՍ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐՈՐԵՒ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1859 • ԹԻ՛ 12

ՎԱՆՏԱՅԻՐ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՍԳՈՒԲԱԿԱՆ ԱՐԾՈՒՄՅՆ

ԴԱՐԱՆԴ



THE

LIBRARY

OF THE
UNITED STATES OF AMERICA

DEPARTMENT OF THE INTERIOR
BUREAU OF LAND MANAGEMENT

WASHINGTON, D. C. 20240

1975

U.S. GOVERNMENT PRINTING OFFICE

WASHINGTON, D. C. 20540

նոր Եղիաս վրէժխնդիր աստուածային օրինաց եւ ճշմարտութեան : Այր՝ որոյ չկարացին ստնանել հրապուրանք փաղաքուշ ունայնութեանց եւ սէգ սպառնալիք յանիրաւի յոխորտացեալ իշխանութեան : Քանզի մինչ էրն 'ի Սեւան կղզի եւ բարեվայելուչ կարգաւորութեամբ ըստ Մագենացւոցն վանից բարեզարդէր եւ զնոյն մենաստան, առ ինքն ժողովելով բազմութիւն արանց միանձնացելոց, վարժէր զնոսին 'ի դիտութիւն բարձր եւ 'ի սուրբ ջերմեռանդութիւն կրօնական. եւ իբր Արեգակն գեղատեսիլ փայլէր 'ի բովանդակ Հայ աշխարհիս, Հասանէ առ ինքն հրաման եւ յորդորք մեծի սպարապետէն Աբասայ յեղբօրէն Աշոտոյ արքայի, գալ 'ի հաւանութիւն ինքեան եւ անբաստան լինել զտէր Գէորգ սրբազնագոյն կաթողիկոսէն : (Քազի զնայ կարծէր տկարամիտն չթագաւորելոյն իւրոյ լեալ պատճառ եւ խռովութեանց՝ որ 'ի մէնջ իւր եւ արքայորդոյն Սմբատայ) : Խոստանայր եւս Աբաս՝ կաթողիկոս ինքն կացուցանել բովանդակ հայոց՝ եթէ միաբանեսցի 'ի խորհուրդն իւր չար. որոյ առեալ զայսպիսի հրաւեր անսրժան եւ անօրէն՝ խռովէր 'ի հոգի եւ լի թախծանօք պաշարեալ՝ զառաջինն լուել յանձն էառ. բայց որպէս զի մի լուութեամբն այնուիկ այլ ընդ այլոյ կարծիս տացէ սպարապետին եւ համախոհից նորին՝ դրէ առ նոյն ինքն Աբաս պատասխանի յոյժ իմաստալից եւ յորդորակ՝ սքանչելի սրբտաշարժական բանիւք. որոյ սկիզբն է .

» Եկն եհաս 'ի վերայ հրաման հզօրիդ պատկառելիք,
 » զոր եւ ընկալայ սիրով հոգւոյ, ըստ մննդակից գալոյ ինձ
 » 'ի մանկութենէ օրինացն աստուծոյ եւ ըստ հաւատոյ
 » հարազատութեան դաշնաւորեալ 'ի հաւատակցութեան
 » ձեր. որ ըստ Պօղոսի՝ սիրունդ էք, եւ ոչ ատեցեալք .

Յաւել քան զայս գրեաց երանելին Մաշտոց՝ այլ թուղթ յորդորանաց եւ սիրաբան. եւ եկաց սիւն հաստատութեան եւ աղբիւր խաղաղութեան հանուր հայրենի տան եւ բաւ զում միջնորմն խռովութեան եւ երկպառակութեան, երկնաշող վարդապետութեամբ իւրով քակեաց. եւ զսիրտ թաւ քաւորին ընդ նախարարս եւ ընդ արեւակիցս իւր զօրեալ միացոյց եւ ՚ի մրկեալ խռովութեան, արար խաղաղութիւն մեծ :

Հիշեսց համբաւ եկեղեցաշէն առաքինութեան սրբոյն ՚ի բոլոր հայ լսելիս . եւ ամենայն ոք յանուանէ անգամ նորին պատկառ մնայր . Որոյ վրան եւ ՚ի մեռանիւ Տ. Գեորգեայ սրբազնադոյն հայրապետի, գործն ինքնին ՚ի դուռն փութացեալ՝ ամեալ կացուցանի յաթոռն սուրբ զայրն խաղաղարար, պարծանքն նորոյս սիովնի, եբրեւ զփեսայ տարիաւոր առ հարսն սրբենի :

Արդ՝ մինչ փութայրն առնել բարեկարգութիւնս եւ բեւելի եւ զստացեալ տաղանդ պատուիրանին Ստուծոյ ընդ ամենեոսն տարածել, նմանող գոլ իւրն բեղմնաւոր նախորդաց՝ զկնի եօթնամեայ, հասանէ առ նա հրաւեր երկնային, թողուլ զամենայն եւ զկնի փութալ տիրական ձայնին եւ մի մնալ լինել խաղաղիկ ամբարշտեալ ժամանակին, յորում հայաստան բոլոր ՚ի ծփանս ալեւտանջ հարածունաց եւ խռովութեանց մրկեալ տատանեալ ռազնապէր : Գընաց մեկնեցաւ այրն բարի՝ զի մի րատ ժամանակին բերմանց եւ աստիճանին՝ հասցեն ինքեան հեղեղք մարդահաճութեան՝ ոտաբանց առնել հիւրին առաքինութեան պտղալից՝ ատրբացեալ՝ սուրբ ձիթենին :

Ուսարուք որդիք զգոնութեան յորինակէ մեծիս, սանձահարել զեղու եւ զգրիչ ՚ի զլաբան բանբասանայ եւ

ի պարտութեամբ չարութեան բանից՝ խրատեալ ՚ի բաղքա-
բան յորդորակ ճառից մեծին Սարգսի որ ասէ .


« Օ այսպիսի ահագին բանս լսելով սիրելիք՝ սթափեցուք
ի խելագարութենէ՝ եւ մի զոր դատեսցուք յանկրաւի՝
կամ իրաւամբ անողորմաբար . զի մի զանողորմիցն դատաս-
տան վեր ընկալցուք : Մեղաւոր եւ վիրաւորեալ է զոր
դատին , եւ այնու ողորմութեան է արժանաւոր եւ ար-
տասուաց ՚ի քէն , եւ ոչ դատապարտութեան . կարեկից լի-
նելոյ նմայ եւ ցաւակից՝ եւ ոչ բամբասելոյ :

Եւ թէ արդար է զոր դատին եւ անարատ , եւ յայն-
մանէ առաւել պարտ էիր երկնչել եւ դողալ . զի նա ազատ է
ի դատաստանաց եւ ՚ի բամբասանաց , եւ դու առ նախան-
ձու եւ կամ առ չարակնութեան՝ դատիս զնա իբրեւ զյանցա-
ւոր , եւ ՚ի լուր բազմաց բամբասես իբրեւ զմեղաւոր : Զի
կեղտ անուն զոր դնես նմա՝ ծածկեսցէ զբարեւոր անունս
արդարութեանն որ եղեալ էր ՚ի վերայնորա : Եւ զայն ոչ
դիտես՝ եթէ որով չափով չափես նմա զլուտանէն , չափեսցի
եւ բեզ ՚ի դատաւորէն . զի զմեղացն որով ստութեամբ բամ-
բասեցեր զարդարն , եթէ շնութիւն իցէ , եթէ այլ ինչ ՚ի
մեծամեծացն՝ եւ կամ ՚ի փոքունց , զդատաստանն դու
ինքնին անձամբ քո բարձցես : Եւ այսոցիք աղագաւ՝ բամ-
բասողք զարքայութիւնն աստուծոյ ոչ ժառանգեն . եւ զի
եթէ զյանցաւորն չունիմք իշխմնութիւն դատել , որչափ
եւ առաւել զարդարն : Իսկ ՚ի դատաստանացն Քրիստոսի
առաւել պարտիմք երկնչել , որ սաստկապէս յանդիմանէ
զայնոսիկ՝ որք այնպէսն դատին , զիւրեանցն ոչ ինչ վարկա-
նել զմեզս , թէպէտ եւ մեծամեծք իցեն . իսկ ընկերացն
վասն փոքրագունից դատախազ լինին եւ յանդիմանիչ . . :

Եւդ զայսոսիկ դիտելով մեր եղբարք , զաղարեսցուք ՚ի

դատելոյ զմիմեանս, լռեցողութիւնս ի բամբասելոյ զլեզուս մեր,
եւ մի տեսցուք զայլոց զշիւղս՝ այլ զգերանն մեր սրբեսցուք
եւ մի լիցուք այլոց բժիշկք՝ չարաչար կեղովք լցեալքս. ի
մեզ ինքեանս հայեցուք. եւ զգաղտնիս սրտից մերոց խու-
գեսցուք. զմեղս մեր դատեսցուք եւ զցաւս մեր բժշկե-
ցուք եւ խոստովանութեամբ զամենայնս ի համար բեր-
ցուք ։

• • Արդամբական ։



Բ. ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱԸԷՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ

ԿՈՍՏԱՆԴՆԻՆ ՌՈՒՐԻՆԵԱՆ ՊԱՆԺԱԼԻ ԻԸՄԱՆ ԿՐԼԻԳԻՈՅ

Արդարեւ արժանի չեն անոնք իշխան եւ ժողովուրդի մը
հայր կանչուելու, որոնք որ մի միայն իշխանական փառացը
վերայ զմայլելով՝ ամբողջ ազգ մը կամ ժողովուրդ մը իրենց
փառասիրութեան անյազ ցանկութիւնը յադեցնելու հա-
մար դարձիք մը կրնեն, եւ անոնց երջակութեանը համար
աշխատելու պարտաւորութեանցը անհոգ կրլլան ու յա-
ւիտենական յիշատակաց արժանի երեւելի դարձրելով մարդ-
կային ազգին մէջ դովութեամբ յիշատակուելու տեղ՝ ա-
մենուն առջեւ վատանուն ու պախարակելի կրլլան ։ Բայց
երջանիկ կրլլայ այն ազգը՝ երբոր այնպիսի իշխան եւ այն-
պիսի տէր մը կուենայ, որն որ չէ թէ թեթեւամտու-
թեամբ մը սնտի փառաց կը ցանկայ՝ հապա իշխանու-
թիւնը իր կարողութենէն վեր ելող իբրեւ ծառայական
մեծ պաշտօն մը կը ճանչնայ՝ եւ ժողովրդեան իրեն ըն-

ծայած փառքը շողորորդութիւն մը կը սեպէ, բայց հայրաբար կը գթայ անոնց վերայ՝ եւ անոնց ամենափոքր վերքը իր ազնիւ սրտին մեծ ցաւ մը կը լլայ. այսպիսի իշխան մը իր իշխանութեան պտուղը եղող երջանկութիւնը այն ժամանակը կզգայ՝ որ ատեն իր քրտամբը եւ աշխատութեամբը որ եւ իցէ կերպով ազգին երջանիկ ըլլալը կը տեսնայ :

Ահա այսպիսի բարեմասնութեամբք զարդարեալ անձ մըն էր դիւցազնոյն Ռուբէնի արժանաւոր ժառանգ բարեյիշատակն Աոստանդին, որ գիտէր թէ որչափ ծանր գործ է ազգ մը կառավարել եւ անիկայ ամէն վտանգներէ պաշտպանելը եւ խնամելը. ահա այսխորհուրդով ամենայն զօրութեամբ սկսեց ծառայել ազգին քան թէ իշխել. ջանաց փառաւորել ազգը քան թէ փառաւորուիլ. եւ իր հօրը նման ազգասիրութեամբ սիրող վառուած ըլլալով, անտերունջ Հայաստանին մէջ թշնամիներէն հալածուող՝ եւ իր հովանաւորութեան ու պաշտպանութեանը ապաստանող Հայկազանց հանգիստ տեղ եւ բնակութիւն պատրաստելու կը ջանար՝ եւ իր բարակամտութեամբը ու խոհականութեամբը՝ ազգին վերայ խորխտացող եւ անհանգիստ բնող սէգ Յոյներուն հետ անվիհեր քաջութեամբ բազմաթիւ պատերազմներ ընելով, անոնցմէ շատ տեղեր առաւ եւ զերինք ալ նուաճեց : Յոյք այս քաջութիւնները տեսնալով՝ իմացան թէ կայսրութեան փառաւոր անունը զօրոտը բազմաթիւ խումբերը եւ ուրիշներու վերայ խորխտալը չէ եղեր յաղթութիւն բնողը, հապտ մի միայն Աստիւնատութեան յաջողութիւնը եւ միանգամայն քաջութիւնն է եղեր :

Այս գիւղազն Աոստանդին՝ ելել ի գործքով մը օտար ազգաց պատմութեանց մէջ խիստ գովութեամբ եւ երախ-

տագիտութեամբ կը յիշատակուի թէ իր եւ թէ ընդհանուր ազգին ազնուութիւնը առատաստութիւնը այսինքն ինչպէս որ Ուռհայեցին Սամուէլ եւ ուրիշ պատմիչները կը պատմեն թէ , երբոր Եւրոպայի զանազան ազգերէն ժողովուած բազմաթիւ խաչակիր զօրքերը սուրբ երկիրը այլազգեաց ձեռքէն ազատելու համար արեւելք եկան , անոնց զօրապետները այս Հայկազուն Սոստանդին մեծ իշխանին դեսպան խրկեցին . որ իր երկրին մէջէն անցնելու համար ճամբայ տայ , եւ սուրբ Երուսաղէմ երթալու համար կարճ ճամբաներ ցրցունէ՝ ու գունդ մ'ալ զօրք խրկէ , որոնք այն կողմի թշնամեաց ծածուկ հնաւորներուն տեղեակ եղած ըլլան : Առատասիրտ եւ վեհանձն իշխանը չէ թէ միայն անոնց խնդիրքը կատարեց , հապա աւելի երախտիք եւ բարերարութիւն մը ընելու համար , երբոր լսեց թէ Անտիոք բաղաբը պաշարած Ժամանակնին սովէն իրենց զօրքերէն շատերը մեռնելու սկսէր էր , կերակրոյ առատ պաշար մը խրկեց՝ այնպէս որ շատ օր բաւական ըլլալով սովէն ազատեցան . իրեն օրինակին հետեւելով իր նիզակակիցները Բազունի՝ Օշին՝ Գող Վասին՝ Ապիրատ եւ ուրիշները նոյնպէս շատ պաշար խրկեցին : Եւրոպացիաց այն զօրապետները Սոստանդինին այս բարերարութիւնները տեսնալով , Անտիոք բաղաբը առնելէն ետեւ շատ մը ընծայներ եւ զարդեր խրկեցին իրեն՝ եւ ընդհանուր ազգին Աստուծոյ եւ Հիւսկարոս անուանելով պատուեցին զինքը , եւ շատ մը տուրքերով ու պատուով Սոստանդինին զօրքերը իրենց տեղը խրկեցին : Ահաւասիկ Սոստանդին իր գովելի վարմունքովը թէ Եւրոպացի եւ թէ Յոյն իշխանաց առջեւ երկւելի եւ անխածելի եղաւ , եւ այսպիսի բաղաբական ու թեամբ եւ առսքինական գործքերով չէ թէ միայն

իր ժամանակի ազգայինները փառաւորեց եւ ուրախացուց՝
այլ պատմութեանց մէջ ազգին առատաստութեանը եւ
բարեբարոյութեանը պտուղ եղող յիշատակ մ'ալ ձգեց,
որն որ ազգերնուս ազնիւ բնաւորութիւններն յայտնող
պարծանք մ'է՛ մանաւանդ այս քաղաքականացեալ դա-
րուս մէջ :

Ահա ասով՝ եւ պատմութեանց մէջ յիշատակուած ա-
սոնց նման Հայկազանց օտար ազգաց ըրած բարի եւ օգ-
տակար գործքերով եւ օգնութիւններովը, շատ ազգ աղէկ
հասկցած եւ փորձը առած են որ, թէ տէրութիւն եւ
թէ հարստութիւն ունեցած ժամանակը եւ թէ անիշ-
խանութեան վիճակի մէջ եղած ատենը, օտարաց վնաս մը
չտալէն զտա՝ մանաւանդ թէ անխտրութեամբ եւ առա-
տաստութեամբ որ եւ իցէ միջոցաւ կը բարեբարէ, այն
եղանակաւ՝ ինչպէս որ իրենց ազգին մէջի եղող ազգայինք
ազգասիրութեամբ կը բարեբարեն : Այս այսպէս ըլլալը
լուսաւորեալ եւ բարակամիտ ազգերն շատ աղէկ իմացած
են :

Բայց երանի թէ ազգայինք իրենց ազգին ալ բարեբա-
րէին այն ոգւով այն եռանդով եւ այն եղանակաւ, ինչ-
պէս որ օտարաց կընեն : Եւ երանի թէ սիրէին իրենց ազ-
գը այն եղանակաւ եւ այն եռանդով եւ այնպիսի հաւա-
տարմութեամբ վարուէին անոր հետ, ինչպէս որ օտարնե-
րուն հետ կը վարուին : Եւ ահա այս կերպ բնաւորու-
թիւնը եւ վարմունքը որ ժամանակ որ ընդհանուր ազ-
գերնուս բնական բնութիւն մը ըլլայ, այն ատենը մեր
ազգին ազգասիրութեան կերպն ալ երեւելի լուսաւորեալ
ազգաց նման պիտի ըլլայ, եւ հետեւաբար անոնց նման
ամէն բարութեամբ զարդացեալ եւ լուսաւորեալ ազգ մը

պիտի ըլլայ. վասն զի ազգի մը երջանկութեան տաճարը կանգնող ճարտարապետը մի միայն ճշմարիտ ազգասիրութիւնն ու յարատեւ ջանքով եւ աշխատութեամբ անոր օգնելն ու բարեբարելն է :

Տ. Կ. ԳԱԼՓԱԿՃԵԱՆ

Գ. ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՅ

« Ի՞նչ որ ցանկէս, լայն էլ հնչէ » :

Միկայ անուրանալի ճշմարտութիւն մի է քան թէ առած , օրինակէ , բայց ինքն ուրիշէմը օրինակուածէ : փորձմը որ զճշմարտութիւն կըստուգէ կըզտէ . եւ մէկմը չիկայ դրէթէ որ այս խօսքին տղէտ ըլլայ . յետին գեղա. ցիկն անգամ զուրցես շուտով վեր կառնէ . քանզի անոր ճիշտը իրեն ձեռքի մէջ գաղափարուածէ . ցորեն կըցանէ՝ ցորեն կը հընձէ , փուշ կ'ցանէ փուշ կըհնձէ . վերջապէս արմատն ինչ ձգես պտուղ նոյն կըբերէ : Այսպէս կը վարդապետէ Յիսուս սուրբ Աւետարանի մէջ զնմանութիւն քարոզութեան եւ ընդունելութեան բանին կենաց : Բայց կը կարգանք դարձեալ նոյն սուրբ Աւետարանի մէջ « եւ 'ի քուն լինելն եկն թշնամին եւ ցանեսց զորոմն 'ի վերայ (ցորենոյն) եւ գնաց . եւ իբրեւ բուսաւ եւ որոմն ընդ նմս . . . » :

Արդ սուրբ Աւետարանի ըսածը ճիշտ սատեսնայի . թշնամութիւննէ . որ մարդոյս սրտին մէջ զանազան չարեաց

որումներ ցանկերով. կ'ակօհ հեղձուցանել զհասկ ցորենոյն
(բարեաց) : Բայց երկնաւոր հայր Թող կուտայ որ եր-
կուքն ալ աճեն 'ի միասին . մինչեւ 'ի ժամանակս հնձոց .
անտեսն՝ զորումն 'ի հուր եւ զցորեան 'ի շտեմարանս Ար-
քայլութեան կը հրամայէ ժողովել : Ասանկ խրատմը Բրիս-
տոս ընդ հանուր եկեղեցւոյն տուաւ . բայց մեր խօսք
այժմ պիտի ըլլայ մասնաւորապէս ազգային եկեղեցւոյն
վրայ :

Ազգիմը սերմանացանները կը ճանչցունեն եւ են իսկ
գլխաւորապէս եկեղեցականներ . որոց ձեռք յանձնուած է
եկեղեցին . այսինքն ժողովուրդ : Բայց ասոնց մէջն ալ զա-
նազանութիւններ կան, ինչպէս առաջնորդ մը կամ կառա-
վարիչ եկեղեցականմը պարտաւորեալ է ժողովրդեան սրբ-
տին մէջ միանգամ խաղաղութիւն եւ միաբանութիւն
տպաւորել, ասոնցմէ յառաջ էկած՝ օգտակարութիւն եւ
երջանկութիւններ մակարեւելով . եթէ կուզէ, եթէ ինքն ալ
ուշի . ապա թէ ոչ անհրեարին է ամանցումը : Ըսենք թէ
կայ ազգասէր եւ իսհեմ Առաջնորդ մը . որկուզէ ամէն բա-
րիք ընծայել իւր ժողովրդեան . բայց արգելքներ կան . որք
կը հակառակին իւր նպատակին . յուսահատելու չիգար,
քան թէ երկայնամիտ ըլլալու . խօսքերնուս ապացոյց մերձա-
ւոր նմանութեամբ մը կըրնանք հաստատել : Ահա ասիկ նոյն
սերմանագան երբ կը տեսնուի իւր ագարակի զուտ ցորենին
հետ որմներն ըստեր, հաստատ համբերութեամբ մը կը
հրամայէ ծառայից « թէ Թոյլ տուք երկողունցդ (ցորենոյն
եւ որման) աճել 'ի միասին . եւ 'ի ժամանակի հնձոց .
ասացից յհնձօղան . քաղէցէք նախ զորումն, եւ ապա զցորե-
ան » : (յայտ է թէ) զորումն 'ի հուր այլեւ . եւ զցորեանն

դանձել 'ի շտեմարանս : Այն օրինակ գեղեցիկ բարոյակա-
 նութիւն մը կ'առաւելանէ մեզ . պէտք է որ եւ իցէ կարգի
 անձինք իրենց պաշտօնին համեմատ այս հարկը ունենան .
 հայրմը իր որդւոց կամ գերդաստանին , եթէ կայ մեջերնին
 որոմը . որ այլոց բարոյական կը դառնացունէ կամ կ'ապակա-
 նէ . չէ հարկ որ մէկէն խլես անոր արմատը . դուցէ ցորենին ալ
 հետ խլուի . որու համար այնչափ խնամք ունեցերես ,
 քրտինք թափերես եւ ակնկալութիւնդ ալ ան է միայն .
 այսինքն կենացդ պարէն պիտի ըլլայ . ոգի հսոյիւ կեայ մարդ .
 ուստի մեծ ցաւ է թէ որ ցորեանդ 'ի կորուստ մատնես :
 Դաստիարակմը պէտքէ իւր աշակերտելոց վրայ այս խնամքը
 ունենայ , անխտիր իւր բարոյական դասեր , մատակարարելու
 եւ հաւաստրապէս զանոնք բարեսրտութեամբ կրթելու
 ուղղելու . վարքերնին . օրինակ առնելով թէ որոման համար
 միթէ ցորենն ալ պէտքէ անդորման թողուլ . այսինքն
 ջուր չիտալ ժամանակին , խնամքէ ձգել . եւայլն : Առաւել
 լապէս եկեղեցական մշակաց համար վայելու չէ նոյն օրինակ .
 որք Քրիստոսի եկեղեցւոյ բոյսերը դարմանելու խնամա-
 կալ , կամ պաշտօնեսոյ են . պատշաճ օրինակ կը համարուի այս
 մասին Աստուծոյ ամենախնամ բարիքը « զի ծագէ զԱրեւ
 դակն 'ի վերայ չարաց եւ բարեաց » կրնան եւ անոնք ալ
 յանցաւոր կամ մոլորեալմը սրտմտութեամբ իբրեւ զիւր
 խնդիր չըդատապարտել . քան կարեկցութեամբ եւ բարձր
 հեղաբանութեամբ 'ի դարձ կոչել . մոլորեալ ոչխարին հե-
 տեւելով մինչեւ դտանել զնա : Ղենք կրնար բոլորովն
 հաստատել թէ ամէն յանցաւորը պատեհութիւն ու-
 նենայ դարձի դալու , բայց հովիւմը իր վարձք կրնազունէ
 թէ եւ չը կըրնայ շահիլ . պաշտօնեսոյն իր պարտքը կատարել
 կը նայի . եւ Տէրն ալ անոր վաստակ կը պտակէ . թէ եւ ար-

դիւնք ալ չունենայ , մասն զի ծառայի պարտքը տիրոջ հը-
րաման կատարել է : Քանի քանի այսպէս անհոգութիւններ
դժբանդաբար ազգային կառավարչացւոյ տիրերէ , որք զեռ-
սկզբմունքմը չբրած , յուսահատութիւնը վրայ կը բերեն
եւ պատճառելով թէ , անհնարին է , ուրեմն ձեռնարկու-
թիւննիս ալ անխելք աշխատանքմնէ : Ասանկ ընելով
ահա ասիկ ազգերնիս այս թշուառ վիճակը ունեցաւ . իսկ
այժմ աղէկ հասկըցանք թէ , անհոգութեանը ատար ազգիս
կենդանութեան հոգին կը մեռցունէ :

Ուրախ եմք , ազգերնուս այս նոր զգացմանց վրայ .
գովելի ձիրք . յոյս կը շողշողան իւր ընթացիկ հետ . եւ
յոյսն յոյսեմամ կը կատարի երբ ջանք եւ գործադրու-
թիւն ալ համալըծ գուպադրութեամբ յառաջ տարուի .
տարակոյտ չըկայ որ մեր ազգն ալ այսպիսի արիութեամբը
այլոց նախանձելի հանդիսանայ : Այս հոգը առաւելա-
պէս եկեղեցական եւ իշխան գլխաւորաց կը պատկանի .
ինչպէս իրաւամբ կ'ասէ ՍԷՅԵԱԳ. « Լաւ իշխանն՝ մարդ-
կային ազգի պահապան է » : Եւ Յիսուս եկեղեցւոյ իշ-
խանաց համար հովիւ կրտ . Դսեյ է որ հովիւ եւ պահա-
պան երկուքն ալ արթուն հսկողութեան եւ խնամց պէտք
ունին . ուրեմն ազգի կրթութեան եւ կրօնից հաստա-
տութեան միջոցներ ընտրելու է . ազգերնիս երջանկացնե-
լու Աստուած պատեհութիւն տուած է , իր մնայ եռանդ
եւ ջանք . ալ խնայե՞նք , տեսնո՞ք , ալ լռե՞նք . պսակ դարու-
մը մէջ , որ մեր նախնեաց ձեռք հազիւ անդամանցեր . խնամք
եւ դատարարակութիւն կը պահանջուի . այո՛ , նոր խօսող ե-
րեսայն ալ այժմ կ'թոթովի « կարդամ , կրթուիմ Աստուած-
պաշտութեան եւ ազգասիրութեան հանգիստից մէջ » . սիրով
մոխի կընէ եւ կ'ուսանի կրօնական եւ ազգային պատմու-

Թիւններ . երկու հոգի մէկտեղ եկած ատեն , կը սիրեն
այսպիսի մասանց վրայ խօսիլ եւ հոգալ . մի հապա դուք ,
որ կարող էք , այսպիսի միջոցներ անարդիւն մի թողուք . ահա
ւասիկ ազգ իւր սիրտը իբրեւ անդատտան բացեր կը սպասէ
մըշակացդ . ջուր առատ է այս դարուս : Թէ Արտաշէս
Բ . կը գովի իրեն ժամանակաւ երկիրներ , արտեր մը
շակուած ըլլալուն համար . քանի հապա ձեր անունը . որ
բարոյական երկիրներ կը մշակէք եւ կը սերմանէք , որուն
պտուղը պիտի վայելէ նախ Աստուած եւ ապա մեք . հարկ
չէ յիշել Թէ , որոմը ցանօղ , որոմ կը հնձէ . որ դժբաղդաւ
բար յաճախ կը տեսնուի անցեալ եւ ներկայ վիճակնուս
մէջ . եւ բարի սերմանօղ բարիք կը հնձէ . որում շատ
եւ շատ կարօտ է ազգերնիս .

Յ . Գ . Սրո-անյգեանց Աշխիբ
Ժ . Վ . Վարդապետ

ԱՌԱՅ

Ագուստին - Աշխիբ :

Ագուստին կտորմ' պսնիր գտաւ
Թուաւ պատիմ' վերայ նստաւ .
Աղուէս տեսաւ պանրի կտոր .
Շուտմը վազեց ագուստին քով .
Ասաց , եղբայր , զարմանալով :
Ի՞նչ գեղեցիկ փետուր ունիս .
Ոտնէդ 'ի վեր կը փալփալիս :

Տեսքդ ազնիւ աննման է
 Կը զմայլի ով որ երեսդ նայէ ,
 Հապա՛ քո խելք եւ քո հանձար
 Զարմանք բերէր ինծի հազար :
 Նախ քո ձայնիդ շատ հարեցայ
 Քան զհրեշտակին ի՞նչ պակաս կայ :
 Սոխակ Թուլթակ ամէն ոչինչ ,
 Թագաւորաց պէտքես երգիչ :
 Ագռաւ այս խօսք լըսեց ուռաւ
 Եւ փորձելու ձայնը զարկաւ :
 Բերան բացաւ դաշնակելու
 Լիէկէն պանիր բերնէն ինկաւ :
 Հուտմը ազուէս վրան վազեց
 Պանրի կտոր առաւ կլլեց :
 Զանժիտն ագռաւ այսպէս ծաղրեց ,
 « Հնորհակալ եմ պանիրէդ ,
 « Բանթէ կոպիտ ու կոշտ ձայնէդ ,
 Հատ մարդ այս խեղճ ագռաւին պէս
 Աղուէսներուն խօսքով պէս պէս :
 Զինք կ'կարծէ մեծ եւ հըզօր ,
 Բայց վերջ պիտի ողբայ 'ի զուր :

Պաշտօնաւ Միհրէաթ Երուսթիւնեան .
 Աշխիւրթ Ժ . Վ . Վարդապ :

ՊԱՆԴՈՒԽՅ ԵՄ ԵՍ ԵՒ ԱՆՑԱՒՈՐ

Զինչ եմ յերկրի . ծաղիկ թէ խոտ վայրենի ,
 Կեանք վաղանցիկ աւուրց յաւուրս վշտալի .
 Ե թէ ծաղիկ , նա 'ի դաշտին վայելուչ ,

Գ. ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԴՊՈՒԹԵԱՆ

ՀԱՐԲ ԳԱՒԱԹ ԱՌ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅԱԶՆ ՈՒՂԵՒՈՐ

Արագընթաց զի՛ անցանեն, հայկազուն,
Սիրտըդ կարօտ աչք բո՛ւ լարով յիս դարձո՛ւ,
Ես խանձարու՛ր եմքո նախնի բաջազանց ։
Արդ ճանաչե՛ս վաղակառոյց զիմ հիմունս,
Այո՛ ծանօթն համայն ազանց՝ է եւ բեզ։
Ոչ գըլանամ յիս հրաւիրել զտենչալիդ
Ի տես վերջին խմադէպիցս որ հասին։
Ես անդրանիկ էի երբեմն համայն, աղբս ։
Այն ինչ երկիրն ամէն պզօ՛ւր ՚ի բարբառ
Ի Բաբելոն դաշտն ապստամբ յԱստուծոյ,
Ես յայնմ աւուր ազատ ցուրով յորհասէն՝
Գիրկրս բացեալ յիս ընկալայ զվեհազունն։
Ըզ Հայկ ասեմ զիւրցազն անուն պանծալի՛
Որ յինքն ունէր զԱստուած անունըն երկնի։
Յեօթանասունսրն նա միայն դաւանէր
Զմի Արարիչ եւ տէր հանուր աշխարհի ։
Համալսարանն յԱդամային ՚ի բարբառ՝
Զնա կրթեցի թողլով ՚ի բաց զպատժականն
Բարելախաւն անծանօթ զայն ըզ բարբառ ։
Արդ անդրանիկ իմ կիբեցի ՚ի ճակատդ
Անմահ անուն իմ, բեզ պարծանք յաւիտեան ։
Հարբ ես հարանց եմ օթարան հայկազին,
Եւ օրարան նոր մանկութեան թորդումածին ։
Ի վեր հայեաց բարձաբըրոյս ՚ի գագաթ,
Անդ տեսանես զդի՛ Ներքովթեան զմապատ ։

Այն որ խորխուտայր զանձն իւր աստուած տալ պաշտել
 Ջհամայն աղինն երկրորդադուս իւր կոչել,
 Այդպէս պարտեալ 'ի Նոյեան սուրբ հաւատոյն,
 Այսրը դրնի ձեռամբ Հայկայ բաջանուն :
 Մինչ այլ աշխարհ կայր դեռ անգործ եւ անկարգ
 Չեւ մարդկային նոր սերնդոց լեալ դադար :
 Դաշտն իմ ընդր բազում արի բաջ արամբբ,
 Առ 'ի ստորեւ լերինն կանգնէր գերդաստան :
 Եղէ յայնժամ յաղթող հարանց հայրենիք :
 Այնպէս փարթամ եւ նոր փառօք պճնեցայ,
 Իբրեւ արեւ յերկրիս վերայ փայլեցայ :
 Արդ բանս առ քեզ որ ծրծես զօգըս քաղցրիկ,
 Իմ հայկաձեմ դաշտաց հովտաց լեր զննին :
 Սարերս տացեն քեզ արձագանք բերկրաձայն
 Եւ յաւելցին կարօտ սրտիդ նոր փափագ :
 Ընդէր 'ի ստեանց դռ կաթ ծրծես զօտարին,
 Զմօրըդ թողուն որ անոյշէ եւ քաղցրիկ :
 Լացից աւանդ լացից՝ որդւոցդ 'ի վերայ,
 Լացից յանձն իմ թէ՛ իրպէս կամ անորդի :
 Իցէ արդեօք դարձեալ երկնել կամ ծնանիլ :
 Բաջին Հայկայ հին սերնդոց նորոգել :
 Վաչ շինեսցին հնայեալ հիմունքս նորանոր :
 Աչացս արոտօք, սիրուն զաւակս, ոչ ջնջես,
 Թողուն զօտարն, գաս հարազատ 'ի մօրդ ծոց :
 Մի՛ գնար այդպէս, դարձիր առիս, աղաչեմ :

Պատմական գաղափարն ուղեւորին :

Ղիտեմ այն, դու մայր մանկուոյ հայկաջօին :

Չգացի յոգիս թէ զի՞ սրգաս եւ ցաւիս.
 Սուգ ծընողիդ արեամբ լրցոյց զիմ աչկունս,
 Բաւ թէ մոռնամ ըզմայրենւոյդ սէր եւ ուխտ.
 Բայց ապիզար ժամն այն աւուր եւ վայրկեան՝
 Յորում խաղայր նետ անողոք թշնամեաց :
 Օ՛ր էր վշտաց, օր տագնապի, օր թշուառ.
 Որ զմեզ 'ի բաց, ո՛հ, 'ի ծոցոյդ հան խալառ :
 Լանկթամուրին արեան նետէն ողողեցար,
 Ողբիքս 'ի քէն, ախ, գլորելով գընացար :
 Ամպ թըխաթոյր ըզքեւ պատեաց կարկտաբեր,
 Երբ արշաւեաց գոռ Հահապաս 'վերայ մեր :
 'Եռնեմեաց պէս եղաք բոլոր ճղակոտոր.
 Աւաղ չմնաց երբէք 'ի քեզ մատաղ տունկ :
 Այն Հայկաշէն գերդաստանիդ շէնք ամուր,
 Չիք արդ, ափսոս, քար 'ի քարի հաստատուն :
 Բռնաւորին այն չարաշուք ցասման հուր
 Լափեաց լիզեաց ըզբազմաթիւ բո մանկունս.
 Մնացեր այդպէս, դու մայր, այրի, ւ անտերունջ,
 Կողոպտեցար 'ի հին զարդուցդ բազմագանձ
 Աւար գնացին 'ի խուժաստան փառքդ անդարձ :
 Կորիցէ օրն որ զմեզ զըրկեաց 'ի գրկացդ
 Գաղթեաց յաշխարհ ուր ցաւ է մեզ եւ աշխար :
 Խորթ է երկիրն, խորթ են մեզ ջուրք դառնահամ,
 Աշէկիզին ո՛հ աղիք մեր յարածամ :
 Չունիմք ըզդաշտ զի ցանեցուք առատ սերմ.
 Չբղխեն լերինքն ըզբիւրաւոր քո աղբերս :
 Ցամբին արիւնք մեր յերակունս յաշխատել,
 Երկիրն անբեր սակաւ տայ պտուղ մեզ 'ի պէտ :
 Երբ մեր խարօր բացցէ 'ի դաշտ բո յակոս,

Կամ հերկեսցէ երկիրդ պարարտ փխրահող
 Եւր շրջեսցի խաշանց մեր հօտ քոյդ լերինս
 Ի ձառակել յեզերս աղբերց զալարիս
 Արինգն 'ի դաշնակ անդ երգեսցէ խաշնարած,
 Եւ մայելով գայցեն գառիքն 'ի մօր մօտ
 Ախ երբ լցցի սրբոխ որ առ քեզ կարօտ
 Իմ հայրենեսացդ գիշեր դարձցի առաւօտ
 Տրուեալ որդիքդ ժողովեսցին 'ի դոգ մօրդ
 Զօրէն Հայկայ փմ կրթեսցնի լեզուն խորթ,
 Որ խառնակեալ փոխան այժմոյն ասեմ կոր
 Զ Նոյեան բարբառ, երբ խօսեցայց, երանի...
 Մօր եւ որդւոյդ սիրտ սրգաւոր բերկրեսցի
 Այլ քեզ, մայր իմ, նոր աւետիս տամ այժմէն
 Դարն այն եկաւ, որ զքեզ 'ի նոր նորոգէ
 Ընցին աւուրք այն վըշտմբեր քո երկանց,
 Ժամէ ծնանիլ քեզ նոր զաւակ դիւցազանց
 Հայի եւ Արամ եւ պերճ Տիգրան երօւանդեան,
 Տրդատ, Վարդան, Մուշեղ, Սմբատ, եւ Վահան
 Օրհնես, մայրիմ, զանմահ անուն այս դարոյս
 Որ բրթացոյդ բռնաւորաց զաժան սուր
 Ազատութեան ժամ է արդէն, եւ 'ի գութս,
 Հան 'ի դիւայդ քո սրգապատ քօղ տրխուր
 Զգեցիր անդրէն փաղիմի զսպիւ հարսին պէս,
 Նուագիչ մանկունք յօրինեսցեն երգ պէս պէս
 Թոյլ տուր ուրեմն երթայց այժմիկ կամ դարձեալ,
 Երդնում յարեւն Հայկայ նախնոյն, զքեզ չմոռցայց

ՎԵՐՋԻՆ պատմական Հարս Գաւառին :

Բատուած ընդիս եւ քեզ լիցի, երթ որդեակ,
Անջինջ միասցեն յարձան սրտիդ ուխտիդ բանք :
Յուսողբութիւն զինչ այդ՝ անլուր ՚ի վաղուց,
Որ զիմ սիրովի տիրա աղէխարչ վտակոծ :
Երթան բարեաւ, ՀՐԵՇՏԱՆ ՀԱՅՈՑ քեզ պահպան,
Աչք իմ յաւեա քեզ ըսպասեալ շըլացան :
Երկիրն այն խորթ յոր թափառիս յուսահատ,
Հողն իմ բեղուն քեզ բուսուցէ զատոք հասկ :
Եւ այս վերջին իմ քեզ լիցի պաղատանք,
Մի մոռանար ըզ մայրենի Հարս գաւառ :
Երթաս անդրէն եթէ չդարձցիս դու արագ,
Իմ յաւելուն այլ եւս հառնչք հոգւոց, ահ :

ԱԲԳԱՐ Ա. Գ. ԱՇԽԵՐՊ

Ճ. Վ. Վարդապետ :

ՀԱՆՐԱՊ ԶԱՅԱԽՈՍՈՒԹԵԱՆ

Դիողինէս մի մարդու ասաց, որ հայհոյում էր նրան, ոչ
ինչ կը հաւատար մի մարդ. եթէ դովէի զքեզ. եւ ոչ քեզ
(կը հաւատար որ), եթէ մատարանում ես ինձ :

Մոլանից հարցրեցին թէ ինչպէս կարող էր պահպան
վիլ թաղաւորութիւնը, պատասխանեց. երբոր քաղաքացիք
հնազանդ լինին իւրեանց մեծաւորին, եւ մեծաւորին
օրինաց :

Անաքարզիան հարցրեցին, ի՞նչ բան առաւել վնասա-
կար է մարդուն, պատասխանեց. ինքը իւր անձին :

Սի ծառայ պատիժ ստանալով իր տիրոջմէն. ասումէր,
ակամայ մեղանչեցի, ասաց տէր, ուրեմն ակամայ պատիժ
ստացիր :

Սոկրատէս միանգամ արացի զարկ ստանալով մի անա-
մօթ մարդուց, համբերութեամբ տարաւ այս անարգանաց.
Բարեկամներ զարմանալով այս բանի վերայ, պատասխանեց
Սոկրատէս. ի՞նչ էք մտածում եթէ մի էշ արացի էր զար-
կել ինձ, միթէ արժանէր ինձ նորա հետ դատաստան գր-
նալ :

Հանելուկ

Իսկզբանէ անուշա կար
Բայց տակաւին չը կայի ես.
Եւ մէկ ալ զիս դեռ չէր ճանչնար,
Դու ալ տեսնալ զիս կարող չես.
Սակայն անուամբ միշտ կը յիշուիմ
Եւ ինձ նման շատեր ալ կան.
Ո՛ւր եմ արդեօք ո՛ւր կ'գտնուիմ,
Քեզի կ'իյնայ տալ պատասխան.
Թէոր աչօք կուզես տեսնալ՝
Մի աշխատիր անհնար է.
Աչք ունեցողն նաեւ կոյրն ալ
Մտօք միայն զիս կը գտնէ,
Չի թէ բնակիմ պարապ յաման,
Չըսիր լեցուն այն յաւիտեան :

ԲՈՎԱՆԴԱԿՑԱՆԿ

ՏԱՐԵԿԱՆ ՆՈՒԹՈՑ

Նախադրութիւն :

Նոր տարի : 1

ՀԱՆՐԷՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԸԵՆ ՀԱՐՑ :

Գիւտ անտգիւտ կաթողիկոս Հայոց : 3

Յովհան Մանդակունի կարգաւորիչ Հայաստանեայց Սուրբ
Եկեղեցւոյ : 23

Մովսէս Կաթողիկոս Տոմարական կարգաց ուղղիչ Վեհա-
պանծ Հայրապետ Հայոց : 51

Տ. Կոմիտաս Ճարտար բանահիւս Սրբազնագոյն Կաթո-
ղիկոս ամենայն Հայոց : 79

Ներսէս Շինող կանգնիչ եւ նորոգիչ նախնի դաստակերտաց
Ս. Կաթողիկոս ամենայն Հայոց : 207

Անանիա Շիրակացի, Թէոդորոս բռնաւոր եւ Մովսէս
Քերթող քաջարուեստ Հռետորք Հայոց : 135

Երանելի Տ. Սահակ Սրբազնագոյն Կաթողիկոս Հայոց : 163

Արշարունի Գրիգոր Եպիսկոպոս բանբուն եւ Փիլոն վար-
դապետ Թարգմանիչ : 191

Տ. Յովհան Խմաստաւեր Վեհապանծ Հայրապետ Արժանա-
թառանգ յաջորդ Լուսաւորչական մեծի աթոռոյ : 219

Տ. Ստեփաննոս Բ. լիահանձար Նահատակ Եպիսկոպոս Սիւ-
նեայ Աշխարհին : 247

Սրբանեալ Տ. Սիօն Կաթողիկոս ընդհանրական Հայոց : 275

Սքանչելին Տ. Մաշտոց համբաւատենչ Կաթողիկոս ամե-
նայն Հայոց : 303

Վառճապուհ Արշակունի իմաստասեր եւ բազմեղանի	7
Թագաւոր Հայոց :	28
Ա. Աշոտ Բագրատունի աշխարհաշէն Թագաւոր Հայոց :	55
Ա. Սմբատ Բագրատունի գերապան իւրաքանչէր Հայոց :	87
Բ. Աշոտ Երկաթ Բագրատունի հայրենասեր եւ քաջապան Սրբայ Հայոց :	111
Արա Բագրատունի աշխարհաշէն եւ պանծալի Թագաւոր Հայոց :	140
Գ. Աշոտ Ողորմած հայրենաշէն Սրբայ Հայոց :	168
Բ. Սմբատ Բագրատունի աշխարհաշէն Սրբայ Հայոց :	194
Ա. Գագիկ Բագրատունի հայրենաշէն եւ առաքինազորդ Թագաւոր Հայոց :	226
Բ. Գագիկ Բագրատունի հայրենասեր Սրբայ Հայոց :	251
Բ. Գագիկ Բագրատունի հայրենասեր Սրբայ Հայոց :	250
Ռուբէն Հայկազուն անդրանիկ եւ պանծալի իշխան Արիկ :	303
Ստեփան Ռուբէն անդալի իշխան Արիկ :	

ՏԵՄԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՅ :

Արտամեո գիւղ :	13
Արտամեո գիւղ (Եւր. Գիւղ) :	39
Արտամեո գիւղ եւ Բերդակ գիւղեր :	59
Ս. Խաչի վանք :	86
Օրինակ Ս. Խաչի վանքի կոնդակին :	87
Արտամեո գիւղ :	90
Արտամեո գիւղ :	91

Ժառանգաւորաց Վարժարան 'ի վան 'ի վարագ :	111
Իղճք աշակերտիս առ Մայր Վարժարան իմ :	120
Վարմրաւոր Ս. Աստուածածին վանք :	145
Հուշանց գիւղ :	148
Սաշիսպատու Ս. Գրիգոր վանք :	171
Ձորոյ վանք :	207
Լամզկերտ գիւղ :	208
Հաճապղի գիւղ :	236
Լեզք կամ Լեղոյ գիւղ :	236
Աւանց, կամ Աւան գիւղաքաղաք :	262
Կողբանց գիւղ :	175

ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ :

Նախանձ :	18
Վատմուծիւն անկիրթ գաւակի :	33
Թէ որչափ սխալ է մեր աղգին վերայ անմիաբանութեան կարծիք :	34
Ժամանակն կու լիտնչի չեն կատարուիլ դորժքերդ :	64
Բանք Ժողովոյի :	67
Որպէս քաղաք կործանեալ 'ի պարսպաց եւ այլն :	91
Առաի. Գայլ եւ Գառնուկ :	95
Ազգ երթայ եւ ազգ գայ եւ երկիր յաւիտեան կայ :	96
Առաի. Գւղայի. խող եւ Ոչխոր :	121
Ի պողոյ բերանոյ առն լցցի անձն իւր բարութեամբ :	149
Առաի. Աղուէս եւ Գայլ :	152
Հաւ եւ Թաւունք :	133
Հուն եւ Կտուռ :	176
Սարկե եւ Ագաւա :	178

Ագի փառասիրութեան	197
Նկարագիր գինեմոլ անձանց	201
Առակ. Յուլ եւ Մուկ	206
Յիշեալ զապականութիւն եւ զմահ. եւ կաց 'ի պատուե- րանս	231
Առակ. Արծիւ եւ Ագռաւ	260
Առակ. Առիւծ եւ Այծ	261
Աս Բ'նչ է անմիտ մարդոց հոգը՝ միշտ ոչինչ բաներու վրայ	283
Ի'նչ որ ցանես զայն կը հնձես	312
Առակ. Ագռաւ եւ Աղուէս	316
Պանդուխտ եմ ես եւ Անցաւոր	317

ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԳՊՐՈՒԹԵԱՆՑ :

Յիշատակարան Արտամետ գիւղի հին գրչագիր Յայսմա ւուրի	42
Սմբատ վտարանդի, Արտաշէս Արշակունի Թագաժառանգ մանկիկ 'ի գրկի	43
Ողբերգութիւն Անի քաղաքի	45
Քնար Հայաստանի	47
Գովասանութիւն 'ի Վասպուրական աշխարհ	48
Հաներուկ	50
Վերջաբանական յիշատակութիւն Բերդակ գիւղի հին գրչագիր Յայսմաւուրի	68
Բնական գիտելիք, գետնաշարժ	69
Կենցաղօգուտ բանք	72
Վասն իշխանաց	76
Ծանուցում	77
Հաներուկ	69
Օրինակ Կենդանանց գիւղի գրչագիր Աւետարանի վեր- ջաբանութեան	98

Պենցադոգուտ բանք (Դարո-նախ-ի-ի-ան) :	99
Ընթերցասիրաց ընկերութեան պայմաններ :	101
Վասն գինւոյ եւ արքեցութեան :	103
Շուշանիկ դուստր Սենեքերիմայ արքայի :	105
Բացատրութիւն Մարտ ամսոյ հանելուկին :	106
Վերջաբանական յիշատակարան Վարազայ Վանից գրչա- գիր Եսայեայ մեկնութեան :	123
Օրինակ յիշատակարանի Վարազայ Վանից ընտիր գրչա- գիր Հարանց վարուց :	126
Տաղ Վարազայ Խաչին :	128
Տաղ 'ի մեծապանծ Թագաւորս Հայաստանի :	131
Աղօթք եւ Հանելուկ :	134
Օրինակ գրչագիր Աւետարանի Կարմրւորայ Ս. Վանից :	154
Յիշատակարան Շուշանայ գիւղի գրչագիր մեծ Աւետա- րանի :	155
Տաղ 'ի Կարմրաւոր Ս. Աստուածածին :	156
Տաղ 'ի մեծապանծ Թագաւորս Հայաստանի :	157
Քնար Հայաստանի :	160
Բացատրութիւն Մայիս ամսոյ Հանելուկին :	161
Հանելուկ :	162
Վերջաբանութիւն Սալնապատու Վանից գրչագիր Աւետա- րանի :	180
Յաղագս արշաւանաց եւ մեծի պատերազմին Թահմազ Խանին ընդ Օսմանցիս :	183
Բանաստեղծութիւն Միայնիկ Գիշեր :	187
Նմանակերպութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին ՅԻՍՈՒՍԻ -ՔՐԻՍՏՈՍԻ :	188
Հանելուկ :	
Բացատրութիւն Յունիս ամսոյ Հանելուկին :	190
Վերջաբանական Յիշատակարան Լամզկերտ գիւղի հին գըր-	

Հագիր Ճաշոցին :	210
Բանք Հահպաղի գիւղի գրչագիր Մաշտոցի վերջաբանու-	
թեան :	
Վասն օգտելոյ 'ի կեանս 'ի սրբոյ պատարագէն եւ 'ի սի-	
րոյ :	213
Առակ. Անդեսայր եւ Գայլք :	215
Կախեաց զերկիր 'ի վերայ ոչնչի :	216
Լուծումն Յուլիս ամսոյ Հանելուկին :	218
Նամակ Ա :	240
Երախտագիտական ուղերձ :	242
Նամակ Բ. Ճանուցական յորդորակ :	243
Առատաձեռնութիւն :	
Առեղծուած :	246
Ներբողեան 'ի Ս. Խաչն Աստուածընկալ :	264
Սէծն Վարդան 'ի Հաւարչան :	267
Յիշատակարան Ճաշոցի Այր յարուց Ս. Եկեղեցւոյ :	269
Աշուն :	271
Յորդորակ առ Հայկազուն օրիորդս 'ի դաստիարակութիւն	
ուսմանց :	272
Բազմութիւն իմաստնոց փրկութիւն աշխարհի :	291
Եղիշէն 'ի Հաւարչան :	294
Արսէն 'ի դաշտն Աւարայրի :	295
Պարսաւանք բռնակալաց աշխարհիս եւ Յորդորակ առ	
Հանդերձեալն :	296
Զուարճալի պատմութիւն :	301
Հանելուկ :	302
Հարք դաւառ առ գաղթական Հայազն ուղեւոր :	319
Հանդէս Հայեախօսութեան :	323
Հանելուկ :	324

ԱՆՁՆԱՆՈՒԵՐ

ԳՈՐԾԱԿԱԼԻ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ :

ՎԱՆ, Պ. Մկրտիչ Տ. Ատոմեան 'ի զրանոցի վասպուրական
Արծուոյն :

ՎԱՂԱՐՀԱՊԱՏ, Գրիգոր Աղա Տ. Մկրտիչեան Մա-
լենցով :

ԿԱՐԻՆ, Խաչատուր Խան Տ, 'Երսիսեանց եւ միանդամայն
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ՏՓԽԻՍ, շքեղարուեստ Յովհաննէս Աղա Բաբաեան 'Բա-
թանեանց :

ՏՐԱՊԷՁԱՆ, Լղաճան Աղա Յովհաննէսեան :

ՊՕԼԻՍ, Պ. Յակովբ Աղուանեան վանցի 'ի Պալթամաճի խան
ՉՄԻՒՌԻՆ, Պ. Սարգիս Տէր Մարգարեան վանանդեցւոյ :

ԲԵՐԻԱ, Յովհաննէս Աղա Միսաքեան :

ՍԱԼԱՄԱՍՏ, Յակովբ Միրզայեան Մէլիք Յակովբեանց,
միանդամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :

ԴԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՆԻԿ

Ի վան, 'ի Կարին, 'ի Մուշ, 'ի Բաղէշ, 'ի Տրապիզոն 2 ու
կէս Օսմանցի քսան ղուրուշնոց արծաթ Մէճիտիէ :

Ի Պօլիս, 'ի Չմիւռլին, 'ի Բերիա, երեք արծաթ քսան
ղուրուշնոց Մէճիտիէ :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան, այսինքն 'ի Տփիսիս,
յԱղէքսանդրպօլ, 'ի Վաղարշապատ 'ի Դաւլէժ եւ այլն,
չորս արծաթ Մանէթ :

Գին միոյ տետրակի 7 ղուրուշ : Ճանապարհին ծախքը
խմբագիրը պիտի վճարէ :

ԲՈՒԼԱՆԻՒԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԵՍ ԱՍՏՈՒԱԾԱԳԱՀՏՈՒԹԵԱՆ
ԵԿԵՂԵՑ ԱՇԿՆ ՀԱՐՑ

Մահէլէի Տ. Մաշտոց Հմմտ-ապենէ Կաթողիկոս ան-
հայն շայոց : 303

ՀԱՆԻՍԱՐԱՆ, ՀԱՅՐԵՆԱՇԻՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ

[illegible]

ԲՈՒՐԱՍԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21. 22. 23. 24. 25. 26. 27. 28. 29. 30. 31. 32.

ᐅᓕᓂ ᐅᑦᓕᓂ ᑲ- ᐅᓗᓂᓂ 316

Amherst College 1877

ԹԱՆԳԱՄԱՆ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԴՊՊՈՒԹԵԱՆ

Հարկ գումար Ար Գալիւնի Հայուն ուղիորդ 317

Հանդէս Հայախօսող-իւն : 323

324

